ՀԱՍՐԱԹՅԱՆ
ՄԻՆԱՍՅԱՆ
ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՄՈՐՈՒՍ ՀԱՍՐԱԹՅԱՆ

ՀԱՍՐԱԹՅԱՆ ՄԱՏԵՆԱՇԱՐ

Աելիտա Դոլուխանյան

ՄՈՐՈՒՍ ՀԱՍՐԱԹՅԱՆ

Ինքնության և ժառանգության վավերագիրը

new mag

ԵՐԵՎԱՆ
2022

ՀՏԴ 929:93/94:80
ԳՄԴ 63+80
Դ 718

Դոլուխանյան Ալելիտա
Դ 718 Մորուս Հասրաթյան: Ինքնության և ժառանգության վավերագիրը / Ա. Դոլուխանյան.- Եր.: Newmag, 2022.- 228 էջ:

Նա եղել է Չարենցի ընկերը, կալանավորվել Չարենցի պես, նույն մեղադրանքով, ապրել հենց այն բանտախցում, որտեղ եղել է Չարենցը: Նրան ստալինյան ռեպրեսիաների ժամանակ բանտից ազատ են արձակել, որովհետև վստահ էին, որ չի ապրի:

Հնարավո՞ր է կյանքը նորից սկսել 40 տարեկանում, երբ կան դատվածություն ու հին աշխատանքին վերադառնալու արգելք:

Այս գիրքը պատմում է ականավոր պատմաբան և բանաստեղծ Մորուս Հասրաթյանի դժվարին ու հետաքրքիր կյանքի մասին: Չարենցի և Բակունցի հետ մտերիմ Հասրաթյանը համարձակվեց ընկերներին պաշտպանել ստալինյան ռեպրեսիաներից, չվախեցավ մասնակցել Կոմիտասի հուղարկավորությանը, փակ դիտման ժամանակ գովեց Սերգեյ Փարաջանովի ֆիլմը, բրիտանական թանգարանին ստիպեց փոխել «Անահիտ» արձանի գրությունը և պայքարեց հայկական եզակի նմուշներ «Սոթբիս» աճուրդում վաճառելու դեմ:

Մորուս Հասրաթյանը ոչ միայն թարգմանեց Սայաթ-Նովայի խաղերը, այլև անհերքելի դարձրեց նրա հայկականությունը, Գրիգոր Հասրաթյանի հետ ստեղծեց Էրեբունի-Երևան տոնը և իրար կապեց Խորհրդային Հայաստանի ու սփյուռքի մտավորականներին:

ՀՏԴ 929:93/94:80
ԳՄԴ 63+80

ISBN 978-9939-884-67-7
Ալելիտա Դոլուխանյան «Մորուս Հասրաթյան: Ինքնության և ժառանգության վավերագիրը» © 2022, «Նյու Մեգ» ՍՊԸ

Այս գրքի հրատարակության բոլոր իրավունքները պատկանում են «Նյու Մեգ» ՍՊԸ-ին և «Հասրաթյան-Մինասյան» հիմնադրամին:

ՀԱՍՐԱԹՅԱՆ
ՄԻՆԱՍՅԱՆ
ՀԻՄՆԱԴՐԱՄ

Գիրքը հրատարակվել է «Հասրաթյան-Մինասյան» հիմնադրամի նախաձեռնությամբ և ֆինանսավորմամբ:

«Հասրաթյան-Մինասյան» հիմնադրամը ստեղծվել է 2018 թվականի փետրվարին՝ անվանի ճարտարապետ, պետական և հասարակական գործիչ Գրիգոր Հասրաթյանի և անվանի գիտնական, քաղաքագետ, պետական գործիչ Միքայել Մինասյանի հիշատակին:

Հիմնադրամի «Հասրաթյան» մատենաշարը նվիրված է 20-րդ դարի հայ ճարտարապետությանը և կերպարվեստին: Մատենաշարը հայ և միջազգային հանրությանը ներկայացնում է 20-րդ դարի հայ կերպարվեստի և ճարտարապետության մեջ մեծ հետք թողած արվեստագետների, պատմաբանների և ճարտարապետների ստեղծագործական ժառանգությունը:

Նախաբան

20-րդ դարի նշանավոր հայ գիտնական Մորուս Հասրաթյանի կյանքն այսօր թվում է արկածային գրականության պես հետաքրքիր, մինչդեռ իրականում եղել է չափազանց դժվար: Այն գրեթե «հոլիվուդյան» մաքառումներով և երջանիկ վերջաբանով կենսագրություն է, անհավանական փորձությունների միջով անցած տաղանդավոր մարդու բարդ ուղի: Այս գիրքը հենց այդ մասին է. ի հեճուկս ճակատագիր դարձած դատավճռի, նա չկորցրեց հավատը մարդկանց հանդեպ, հետաքրքրությունը կյանքի, սերը հայրենիքի նկատմամբ:

Մորուս Հասրաթյանն ազնվական ծագում ունի, 20-րդ դարի ականավոր սյունեցի է: Բարձրագույն կրթություն ստացել է Երևանի պետական համալսարանում, որտեղ նրան դասավանդել են ակադեմիկոսներ Հակոբ Մանանդյանը, Մանուկ Աբեղյանը, Հրաչյա Աճառյանը, Արսեն Տերտերյանը, Լեոն: ԵՊՀ առաջին շրջանավարտներից էր:

Երիտասարդ տարիներից սկսած՝ աշխատել է Մարտիրոս Սարյանի, Երվանդ Լալայանի, Աշոտ Հովհաննիսյանի, Թորոս Թորամանյանի, Երվանդ Շահազիզի և այլ նշանավորների կողքին:

Ասպիրանտական կրթություն է ստացել Լենինգրադում՝ անվանի գիտնականներ Նիկողայոս Մառի և Հովսեփ Օրբելու ղեկավարությամբ: Դառնալով նրանց տաղանդավոր աշակերտը՝ Հասրաթյանը շարունակել է այդ գիտնականների մարդասիրական ու հայանպաստ գործը:

Ստալինյան ռեպրեսիվ ապարատը բանտ է նետել նաև Մատենադարանի տնօրեն Հասրաթյանին՝ բազում այլ նշանավոր մտավորականների հետ: Մեղադրանքը նացիոնալիստ (ազգայնամոլ) լինելն էր: Երկու տարի բանտում և հիվանդանոցում տառապելուց հետո (ի դեպ, նույն մահճակալին, որին գամվել էր նաև հիվանդ Չարենցը), կիսամեռ վիճակում ազատվել է և բարեբախտաբար ողջ մնացել:

Անվանի, բայց բռնադատված պատմաբանին արգելում են զբաղվել պատմագիտությամբ: Նա ուսումնասիրում է բանասիրություն ու դառնում անզուգական սայաթնովագետ: Հասրաթյանի մեծ տաղանդի շնորհիվ՝ այսօր ընթերցողը հայերեն վայելում է Սայաթ-Նովայի այլալեզու խաղերի թարգմանությունը:

Նա մեծ դեր է կատարել հայ գրականության դասական Համո Սահյանի քնարերգությունը ճիշտ ուղով տանելու գործում: Հանճարեղ Եղիշե Չարենցի և Ակսել Բակունցի մասին թողել է այնպիսի հուշեր, որոնք մինչև այժմ գրավում են հայ գրականության տեսաբաններին: Հասրաթյանը գրել է հիանալի բանաստեղծություններ, պատմվածքներ:

Հասրաթյանին անվանում էին «քայլող հանրագիտարան»: Նրա ուսանողներն այդ լայնածավալ գիտելիքի շնորհիվ մտովի շրջում էին անտիկ Հունաստանով, հասնում Հին Հռոմ, Եգիպտոս, Բաբելոն, Պարսկաստան, Ասորեստան, Ուրարտու: Նրա դասախոսություններն իտալական Վերածննդի մասին էին, հայկական ճարտարապետության, աշխարհահռչակ նկարիչների ու երաժիշտների, հայկական միջնադարի, նոր ու նորագույն շրջանի դասական գրողների մասին:

Գիտելիքի մեծ պաշար, հասարակական ու վարչական աշխատանքի հարուստ փորձ ունեցող գիտնականը 1964–75 թթ. ղեկավարել է Պատմության ազգային թանգարանը:

Դասախոսել է Երևանի պետական համալսարանում, Աբովյանի անվան հայկական մանկավարժական ինստիտուտում՝ մի քանի տարի եղել է գիտական աշխատանքների գծով պրոռեկտոր: 1965–66 թթ. դասավանդել է Բեյրութի Հայկազյան քոլեջում, որը Լիբանանի կառավարությունը համարում էր համալսարան: Ահա թե վաստակաշատ գիտնականին ինչպես է նկարագրում սիրիահայ պատմաբան Երվանդ Քասունին.

> «Եվ, սակայն, ճակատագրով առանձնաշնորհյալ էր նա, գիտեր շնչավորել բառն ու բանը, խոսեցնել քարն ու խաչքարը, կենդանացնել մագաղաթն ու դավթարը: Եվ այդ բոլորը որպես առօրյա սրբազան հաց բաշխել շրջապատին՝ հասակ առնող սերնդի հետ վերընձյուղելով պատմական անցյալը: Իր մահից հետո իսկ ապրող հայագիտություն է պրոֆեսոր Հասրաթյանը»:

Պատմաբան Հասրաթյանը փաստերով ապացուցում է, որ հայերը 5000 տարի ապրում են Երևանում՝ երևույթ, որը եզակի է հատկապես Առաջավոր Ասիայի տարածքում: Հասրաթյանին են պատկանում Էրեբունի-Երևան ավանդույթը հիմնելու, Սայաթ-Նովայի ծննդյան 250-ամյակը ՅՈՒՆԵՍԿՕ-ի հովանավորությամբ ամբողջ աշխարհում նշելու գաղափարները:

Այս գիրքը հայ պատմաբանասիրության ամենատաղանդավոր ու առանցքային գիտնականներից մեկի մասին է:

Այդպիսիններին այսօր անվանում են հանճարեղ կամ բացառիկ անհատականություն: Մորուս Հասրաթյանի մասին խոսում են նրա հայրենանվեր գործերն ու հիմնարար աշխատությունները: Այս գրքի նպատակը լայնախոհ գործչի թողած ինտելեկտուալ ժառանգությունը նոր սերնդին ներկայացնելն է:

Գլուխ 1

Փայլուն կարիերայի սկիզբը, ընդհատումն ու աքսորը

Մարդ ծնվելը սովորական, բնական
երևույթ է, մարդ լինելն է դժվար:

Մորուս Հասրաթյան

1902 թվականի վաղ ձմռանը, դեկտեմբերի 10-ին, Սյունիքի Ախլաթյան գյուղում ծնվում է Հասրաթյանների որդին՝ Մորուսը: Ըստ Հասրաթյանի տոհմածառի, որը 50 տարի անց կկազմի հենց մեր հերոսը, Հասրաթյանները սերում էին Սյունիքի մելիքներից. նրանց նախապապը մելիք Հովսեփն էր: Հայտնի է նրա մահվան տարեթիվը՝ 1650 թվական: Հասրաթյանի նախնիները Ախլաթյան են տեղափոխվել Սիսիանի Վաղատին գյուղից:

Հայ մելիքների ազնվական լինելու փաստի մասին ֆրանսիական հայագիտության հիմնադիր Անտուան Ժան Սեն-Մարտենն իր «Հիշատակարաններ Հայաստանի պատմության և աշխարհագրության» աշխատությունում նշում է, որ Լեռնային Արցախում, Գանձակից ու Բարդայից հարավ, 19-րդ դարի սկզբին կային փոքրիկ, ինքնուրույն իշխանություններ, որոնք իրենց կոչում էին մելիքներ. «Մելիք՝ արաբերենից ծագող անվանում, որ նշանակում է թագավոր»[1]:

Ալիշանը «Սիսական» աշխատության մեջ մի քանի անգամ հիշատակել է Ախլաթյան գյուղը: Առաջին անգամ՝ Ծղուկ